Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐՏՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ՝ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՄՀՄԻ ԱՆԴԱՄ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Արտուր Մովսիսյան

2. ***Զբաղեցրած պաշտոնը***

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ

3. ***Գործուղման վայրը և ժամկետները***

Ռուսաստանի Դաշնություն ք. Դուբնա, 23-ից 27-ը մարտի, 2025 թվական

4. Հրավիրող կողմը

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ

5. Գործուղման նպատակը *(աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)*

Մասնակցություն Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (այսուհետ՝ ՄՀՄԻ) ֆինանսական կոմիտեի և ՄՀՄԻ անդամ-պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների խորհրդի հերթական նիստերին

6. Քննարկված թեմաները-

- ✓ ՄՀՄԻ 2024 թվականի բյուջեի կատարողականը և 2025 թվականի բյուջեի նախագծի ճշգրտում,
- ✓ ՄՀՄԻ-ի 2024թ. ֆինանսական գործունեության ստուգումներ անցկացնելու նպատակով աուդիտորական կազմակերպության ընտրություն,
- ✓ ՄՀՄԻ գնումների ընթացակարգը նոր ինֆորմացիոն համակարգով իրականացնելը,
- ✓ ՄՀՄ ինստիտուտի տնօրենի ընտրության հարցը,

- ✓ Այլ թեմաներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Տեղի են ունեցել հանդիպումներ նաև ՄՀՄԻ-ում աշխատող հայ գիտնականների հետ, ներկայացվել են Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից իրականացվող բարեփոխումները և հետագա զարգացման հեռանկարները:

ՄՀՄԻ ֆինանսական կոմիտեի և ՄՀՄԻ անդամ-պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների խորհրդի նիստերին հանդես եմ եկել ելույթներով, ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետության ֆինանսական պարտավորությունների կատարման ընթացքը և ՄՀՄԻ հետ հետագա համագործակցության վերաբերյալ մեր առաջարկությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ստորագրվել են ՄՀՄԻ ֆինանսական կոմիտեի և ՄՀՄԻ անդամ-պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների խորհրդի նիստերի արձնագրությունները:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է ՄՀՄԻ անդամ պետությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի նախագահի ենթակայության ներքո գործող ֆինանսական հարցերով աշխատանքային խմբի հաջորդ հանդիպումը անցկացնել Երևանում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

29.03.2025թ.

Արտուր Մովսիսյան